Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
մարտի 11-ի N 322-Լ որոշման

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԱՆՑՄԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 1408-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՒՄ «ՄԵԿ ԿԱՆԳԱՌ, ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2021-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Արդյունքը	Պատասխանատուն	Համակատարողները	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1. Պետական սահմանի անցման կետերում և արտաքին տնտեսական գործունեության սպասարկման կենտրոններում հսկողական և վերահսկողական գործառույթների իրականացում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքով						
1.1.	ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների և պետական մարմինների հսկողական և վերահսկողական գործառույթների հստակեցման առնչությամբ հարցաթերթիկի մշակում, նշված հարցաթերթիկի հիման վրա ՀՀ պետական կառավարման մարմիններից հայցվող տեղեկատվության ստացում և գործառույթների վերաբաշխման վերաբերյալ տեղեկատվության ամփոփում և ներկայացում	30.06.2021 թ.	Ամփոփ տեղեկատվության տրամադրում ՀՀ փոխվարչա-պետի գրասենյակ և ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	Ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6	7
1.2.	«Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման նպատակով էտալոնային մոդելի ընտրության համար միջազգային փորձի ուսումնասիրում և Հայաստանի Հանրապետության համար «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի ընտրություն	31.07.2021 թ.	«Հայաստանի Հանրապետության համար «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	Ֆինանսավորում չի պահանջվում:
1.3.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի հիման վրա պետական սահմանի անցման կետերում հսկողական և վերահսկողական գործառույթների վերաբաշխման նպատակով իրավական ակտերի ուսումնասիրություն և համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացում	31.08.2021 թ.	Համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առնչությամբ նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատազմ	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (յուրաքանչյուրն իր գործառույթներին առնչվող իրավական ակտերում իրականացնում է փոփոխություններ և լրացումներ)		Ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6	7
1.3.1.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի հիման վրա արտաքին տնտեսական գործունեության սպասարկման կենտրոններում հսկողական և վերահսկողական գործառույթների վերաբաշխման նպատակով իրավական ակտերի ուսումնասիրություն և համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացում	30.12.2022 թ.	Համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առնչությամբ նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատազմ	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (յուրաքանչյուրն իր գործառույթներին առնչվող իրավական ակտերում իրականացնում է փոփոխություններ և լրացումներ)		Ֆինանսավորում չի պահանջվում:
1.4.	ՀՀ պետական սահմանի անցման կետերում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից հսկողական և վերահսկողական գործառույթների միասնական աշխատակարգի սահմանում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառման նպատակով	31.08.2021 թ.	Համապատասխան իրավական ակտի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	Ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6	7
1.5.	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների սպասարկման կենտրոններում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից տրամադրվելիք հիմնական ծառայությունների սահմանում «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառման նպատակով	31.08.2021 թ.	Համապատասխան իրավական ակտի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	Ֆինանսավորում չի պահանջվում:
1.6.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի հիման վրա ՀՀ պետական սահմանի անցման կետերից մեկում փորձնական ծրագրի իրականացում որոշակի ժամանակահատվածում	30.12.2021 թ.	Փորձնական ծրագրի իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
1.6.1.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի հիման վրա արտաքին տնտեսական գործունեության սպասարկման կենտրոններից մեկում փորձնական ծրագրի իրականացում որոշակի ժամանակահատվածում	30.12.2022 թ.	Փորձնական ծրագրի իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
1.7.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի փորձնական ծրագրի իրականացման արդյունքների հիման վրա ըստ անհրաժեշտության նկատառումների և առաջարկների ներկայացում	30.12.2022 թ.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալո-նային մոդելի փորձնական ծրագրի իրականացման արդյունքների հիման վրա առաջարկու-թյունների ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	Ֆինանսավորում չի պահանջվում:
1.8.	Ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի կիրառում ՀՀ պետական սահմանի անցման բոլոր կետերում և ԱՏԳ սպասարկման կենտրոններում	30.12.2022 թ.	ՀՀ պետական սահմանի անցման բոլոր կետերում և ԱՏԳ սպասարկման կենտրոններում ընտրված «Մեկ կանգառ, մեկ պատուհան» էտալոնային մոդելի կիրառման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշմամբ նախատեսված պետական կառավարման համակարգի մարմինները և պետական մարմինները	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
1.9.	ՀՀ պետական սահմանի բոլոր անցման կետերի համար անձանց, տրանսպորտային միջոցների, ապրանքների բացթողնման տեխնոլոգիական սխեմաների և սահմանահատման ստանդարտ	30.12.2021 թ.	ՀՀ վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
	գործառնական ընթացակարգերի մշակում և ներկայացում հաստատման				ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	
2. «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի արդիականացում						
2.1.	ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող այլ համակարգերի (կշեռքների կենտրոնացված համակարգ, ռենտգեն սկանավորող սարքերի համակարգ և այլն) ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին	30.12.2022 թ.	ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող այլ համակարգերը (կշեռքների կենտրոնացված համակարգ, ռենտգեն սկանավորող սարքերի համակարգ և այլն) ինտեգրվել են «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.2.	«ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի ընդլայնման և կայուն շահագործումն ապահովելու նպատակով ծախսերի և արդյունավետության, գործառնական ռիսկերի գնահատում	30.12.2022 թ.	Մշտադիտարկման իրականացում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		Ֆինանսավորում չի պահանջվում:
2.3.	«ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի ընդլայնման և ամբողջական շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերում	30.12.2021 թ.	Ձեռք բերված տեխնիկական միջոցներ	ՀՀ պետական եկամուտների կոմիտեն		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
2.4.	ՀՀ պետական սահմանի անցման կետերում ներգրավված մարմինների տեղեկատվական համակարգերի և շտեմարանների ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի շրջանակներում փոխկապակցված և/կամ իրար հաջորդող գործընթացները սահուն (անընդհատ) իրականացնելու նպատակով	30.12.2022 թ.	Ինտեգրված համակարգեր	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.5.	Բեռնափոխադրումների վճարման էլեկտրոնային համակարգի ներդրում	30.12.2021 թ.	Ներդրված համակարգ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն	ՀՀ պետական եկամուտների կոմիտե Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.6.	Տրանսպորտային ուղեկցող փաստաթղթերի էլեկտրոնային համակարգի ներդրում	30.12.2022 թ.	Ներդրված համակարգ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.7.	Ինքնաուսուցանվող (machine-learning), արհեստական բանականությամբ տեխնոլոգիաների և գործիքակազմի կիրառում «Ռիսկերի կառավարում» համակարգում	30.12.2022 թ.	Համապատասխան գործիքակազմի առկայություն և կիրառում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
2.8.	ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ավտոմատ արգելադրման գործիքակազմի հնարավորությունների ընդլայնում «Ռիսկերի կառավարում» համակարգում	30.12.2022 թ.	ՀՀ արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ավտոմատ արգելադրման գործիքակազմով համալրված «Ռիսկերի կառավարում» համակարգ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.9.	Մեծ ծավալի տվյալների (Big Data) կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման տեխնոլոգիայի և գործիքակազմի ներդրում «Ռիսկերի կառավարում» համակարգ	30.12.2022 թ.	Ներդրված համակարգ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.10.	«Ռիսկերի կառավարում» համակարգի ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի այլ բաղադրիչների և ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ավտոմատ արգելադրման համակարգի հետ	30.12.2022 թ.	Ինտեգրված համակարգեր	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
3. «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառման համար համակարգերի ներդրում						
3.1.	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշման 2-րդ հավելվածով սահմանված պետական կառավարման համակարգի, պետական մարմինների և կազմակերպությունների կողմից արտաքին	31.05.2022 թ.	Արտաքին առևտրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ վարչապետի 04.10.2019 թ. N 1408-Լ որոշման 2-րդ հավելվածում ընդգրկված պետա-	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
	առևտրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի ստացման և ներկայացման գործընթացի իրականացումն էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպմանն ուղղված աշխատանքներ		սահմանված փաստաթղթերի ստացման և ներկայացման գործընթացի իրականացում էլեկտրոնային համակարգի միջոցով		կան կառավարման համակարգի մարմինները, պետական մարմինները և կազմակերպություն-ները	
3.2.	Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային մարմինների հետ ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի ներդրում	30.12.2022 թ.	Ներդրված համակարգ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		
4. «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման համար կարողությունների զարգացում, շինարարական աշխատանքների և ծառայությունների իրականացում						
4.1.	Առկա ցանցային, սերվերային և պահոցային ենթակառուցվածքների վերազինում	30.12.2021 թ.	Վերազինված ենթակառուցվածք	ՀՀ պետական եկամուտների կոմիտե		ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.2.	«Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի ներդրման և շահագործման համար պետական սահմանի անցման կետերում գործող մարմինների ստորաբաժանումների անհրաժեշտ տեխնիկական և հատուկ (մասնագիտացված) սարքավորումների թարմացում	30.12.2022 թ.	Ներկայացված տեխնիկական բնութագրերին բավարարող անհրաժեշտ տեխնիկական և հատուկ (մասնագիտացված) սարքավորումներ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7
4.3.	Արդիականացնել և վերակառուցել ՀՀ պետական սահմանի «Այրում» անցման կետը	30.12.2022 թ.	Նոր և արդիական անցակետ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին ՀՀ ոստիկանություն	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.4.	Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանների միջև գտնվող Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա կառուցվող նոր կամրջի նախագծման և կառուցման աշխատանքների իրականացում և ավարտ	30.12.2022 թ.	Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական սահմանների միջև գտնվող Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում Դեբեդ գետի վրա կառուցվող նոր կամրջի նախագծման և կառուցման աշխատանքների ավարտ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություն «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ (համաձայնու-թյամբ)	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե	ՀՀ և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2012 թվականի նոյեմբերի 23-ին ստորագրված «Հյուսիսային միջանցքի արդիա-կանացման ծրագիր» վարկային համաձայնագրով հատկացված վարկային միջոցներ և Հայաստանի Հանրապետության համաֆինանսա-վորում

1	2	3	4	5	6	7
4.5.	ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող մարմինների աշխատակիցների համար ուսուցման և կանոնավոր վերապատրաստման ուսումնական ծրագրերի մշակում՝ «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի առանձնահատկություններին վերաբերող թեմաներ	30.12.2022 թ.	Աշխատակիցների 80 տոկոսի վերապատրաստում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.6.	«Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություններ և այդ նպատակով արտասահմանյան երկրներ ուսուցողական այցերի կազմակերպում	30.12.2022 թ.	Աշխատակիցների արտասահմանյան երկրներ ուսուցողական այցերի կազմակերպում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

11.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ